ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀԱ-ԳՀԾՁԲ-2026/12 **ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան «10» «02» 2026թ.
Ժամը 15:00

Հանձնաժողովի նախագահ՝ Ժորա Բարսեղյան
Հանձնաժողովի անդամներ՝ Էլլա Միրումյան
Նարինե Կարապետյան
Ալեքսանդր Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Մանե Խաչատրյան

1. **Տեղեկություններ** ՀԱ-ԳՀԾՁԲ-2026/12 **ծածկագրով գնման ընթացակարգին պարզաբանման մասին հայտարարություն**

(Ժորա Բարսեղյան)

Հարգելի գործընկեր, ի պատասխան Ձեր պարզաբանման հարցմանը՝ հայտնում ենք.

Հարցադրում N1

Արդյոք ԱՊՊԱ գործակալները ունեն իրավունք մասնացելու շարժիչներով փոխադրամիջոցների ապահովագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման ՀԱ-ԳՀԾՁԲ-2026/12 մրցույթին

Պարզաբանում N1

Ապահովագրական գործակալը կարող է մասնակցել գնման ընթացակարգին, եթե գնման առարկա է հանդիսանում գործակալի ծառայության ձեռքբերումը: Ինչ վերաբերում է այն դեպքերին, երբ գնման առարկա է հանդիսանում ապահովագրական ծառայությունների ձեռքբերումը՝ ապա նշված ընթացակարգերին գործակալների կողմից ներկայացված հայտերը ենթակա չեն դիտարկման:

- «Գնումների մասին» օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝

• մասնակիցը՝ պատվիրատուի հետ պայմանագիր կնքելու նպատակով գնումների գործընթացին մասնակցող անձն է, հրավերը՝ պայմանագիր կնքելու նպատակով մասնակցին առաջարկվող պայմաններն են, իսկ հայտը՝ հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է.

• գնումը պատվիրատուի հատուցմամբ՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու միջոցով բոլոր տեսակի ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումն է.

- «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ ապահովագրական գործակալի գործունեությունը անձի կողմից մեկ կամ մի քանի ապահովագրական և (կամ) վերաապահովագրական ընկերությունների անունից և հաշվին ապահովագրական միջնորդային գործունեության իրականացումն է: Ապահովագրական միջնորդային գործունեությունը երրորդ անձի կողմից՝ ապահովագրողների (վերաապահովագրողների) և ապահովադիրների միջև ապահովագրական հարաբերությունների հաստատմանը, նրանց միջև ապահովագրության պայմանագրի կնքմանը դրդող, նպաստող, աջակցող կազմակերպչական, այլ փաստացի և իրավական գործողությունների իրականացումն է, մասնավորապես՝

ա. ապահովագրական և վերաապահովագրության պայմանագրերի կնքման նախապատրաստական աշխատանքների, այդ թվում՝ նաև ապահովագրական խորհրդատվության իրականացում.

բ. ապահովադիրների՝ կոնկրետ ապահովագրողների հետ ապահովագրական և վերաապահովագրության պայմանագրերի կնքման կազմակերպում.

գ. ապահովագրական և վերաապահովագրության պայմանագրերի կատարման օժանդակում, ներառյալ՝ ապահովագրավճարների հավաքման և հատուցումների փոխանցման իրականացումը՝ ապահովադրի կամ Ընկերության թույլատրած չափերով:

Ելնելով վերը նշվածից և հաշվի առնելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքով սահմանված ապահովագրական գործակալի գործունեության բնույթն ու նպատակը՝ գտնում

ք, որ վերջինս գնման ընթացակարգերին կարող է մասնակցել այնքանով, որքանով գործակալի առաջարկած առայությունները համապատասխանում են պատվիրատուների կարիքներին՝ հրավերով սահմանված պահանջներին: Օրինակ՝ եթե գնման առարկա է հանդիսանում գործակալի ծառայության ձեռբերումը:

Հետևաբար՝ ապահովագրական գործակալը կարող է մասնակցել գնման ընթացակարգին, եթե գնման առարկա է հանդիսանում գործակալի ծառայության ձեռքբերումը: Ինչ վերաբերում է այն դեպքերին, երբ գնման առարկա է հանդիսանում ապահովագրական ծառայությունների ձեռքբերումը՝ ապա նշված ընթացակարգերին գործակալների կողմից ներկայացված հայտերը ենթակա չեն դիտարկման:

Այս կապակցությամբ առաջարկում ենք ապահովագրական ծառայությունների ձեռքբերման դեպքում հրավերով նախատեսել, որ ապահովագրական գործակալները չեն կարող մասնակցել ընթացակարգերին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4 դեմ - 0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.

Հանձնաժողովի նախագահ՝ Ժորա Բարսեղյան

Հանձնաժողովի անդամներ՝ Էլլա Միրումյան

Նարինե Կարապետյան

Ալեքսանդր Գրիգորյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Մանե Խաչատրյան